Հաստատում եմ

Տնօրեն  Ա.Ճ.Խաչատրյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի

Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց

# Բնագիտական առարկաների

## առարկայական մեթոդական միավորման

## ուսումնադաստիարակչական աշխատանքների

## տարեկան պլան - ծրագիր

## 2023-- 2024

Մասնախմբի նախագահ՝ Արևիատ Պետրոսյան

Մեթոդական միավորման կազմի
կրթական և աշխատանքային տվյալները

| | Ազգանուն,անուն | Ծննդյան թիվ | Կրթություն | Որակավորում | Ստաժ | Դասավանդվող առարկան | Դասարաններ | Դ/ժ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Պետրոսյան Արևհատ | 1973 | Բարձրագույն | ուսուցիչ | 30 | Ֆիզիկա, բնություն,թգհգ | V,VII-XII V,VII | 19 |
| 2. | Գևորգյան Մարիա | 1977 | Բարձրագույն | ուսուցիչ | 24 | քիմիա | VII-XII, | 12 |
| 3. | Ավագյան Սուսաննա | 1967 | Բարձրագույն | ուսուցիչ | 26 | Կենսաբանություն, բնագիտություն | VII-XII VI | 16 |
| 4. | Ավագյան Մանուշ | 1970 | Բարձրագույն | Լաբորանտ | 31 | | | |
| 5. | Ղարիբյան Մանուշ | 1980 | Բարձրագույն | ուսուցիչ | | Աշխարհագրություն, Ես և շրջակա աշխարհ | IV,VI-XII | 17 |

## Մեթոդմիավորման գործունեության նպատակը, խնդիրները և ուղղությունները

Մեթոդմիավորման գործունեության հիմնական նպատակը մանկավարժական կադրերի մասնագիտական կրթության և անընդմեջ մեթոդական ուսումնառության ապահովումն է միասնական որոնողական աշխատանքների միջոցով:

Նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել հետևյալ ուղղություններով.

1. Ուսումնադաստիարակչական գործունեություն
2. Ուսումնամեթոդական գործունեություն
3. Կազմակերպական մեթոդական գործունեություն
4. Տեղեկատվական – վերլուծական գործունեություն
5. Խորհրդատվական գործունեություն
6. Հայտորոշիչ գործունեություն
7. Խմբագրական – հրատարակչական գործունեություն
8. Փորձարարական – նորարարական գործունեություն
9. Գիտամեթոդական գործունեություն

| Հ/հ | Ուղղություններ | Խնդիրները | Աշխատանքները |
|---|---|---|---|
| 1. | Ուսումնադաստիարակչական գործունեություն | • Դասավանդումը կազմակերպել ըստ ուսումնական պլանի և ծրագրերի<br>• Անցկացնել ընթացիկ խորհրդատվություններ<br>• Անցկացնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումներ<br>• Ղեկավարել հետազոտական և նախագծային աշխատանքները տվյալ առարկայի շրջանակներում և կազմակերպել դրանց շնորհանդեսը | • Ըստ դասացուցակի ուսումնական պարապմունքների անցկացում<br>• Մրցույթների, օլիմպիադաների, արտադասարանական միջոցառումների կազմակերպում<br>• Ընթացիկ, ամփոփիչ ստուգումների քննարկում<br>• Բաց դասերի, փոխադարձ դասալսումների արդյունքների քննարկում,<br>• Սովորողների հետազոտական և նախագծային աշխատանքների քննարկում |
| 2. | Ուսումնամեթոդական գործունեություն | • Բարելավել սովորողների ուսման որակը<br>• Բարձրացնել ուսուցիչների մասնագիտական մակարդակը<br>• Անցկացնել գիտելիքների, կարողությունների և հմտությունների հայտորոշիչ ստուգումներ, այդ թվում | • Դասավանդման համար անհրաժեշտ մեթոդական նյութերի, տեսաֆիլմերի և այլ նյութերի նախապատրաստում<br>• Խմբակների, թույլ կարողություններ ունեցող աշակերտների հետ |

| | | | |
|---|---|---|---|
| | | նաև ՏՀՏ-ների կիրառմամբ<br>• Կատարելագործել ուսումնական կաբինետների նյութատեխնիկական բազան | պարապմունքների համար ծրագրերի կազմում<br>• Թեմատիկ պլանների կազմում<br>• Հիվանդության պատճառով երկարատև բացակայած սովորողների համար առաջադրանքների և ուսումնական նյութերի մշակում<br>• Աշխատանք ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման շուրջ (տեսադասերի, բաց դասերի,սահիկաշարերի, տեսաֆիլմերի, ուսումնական թեստերի, քննական հարցաշարերի ստեղծում) |
| 3. | Կազմակերպական-մեթոդական գործունեություն | • Մասնակցել կրթական կազմակերպությունների կազմակերպած դասընթացներին, միջոցառումներին<br>• Համագործակցել դպրոցի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ<br>• Մասնակցել ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին<br>• Կազմակերպել աշխատանքներ՝ ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման ուղղությամբ | • Մասնակցություն քաղաքի, համայնքի կազմակերպած կրթական միջոցառումներին՝ խորհրդակցություններին, գիտաժողովների, սեմինարներին<br>• Աշխատանք մեթոդմիավորումում՝ նիստեր, խորհրդակցություններ, զեկուցումներ, սեմինարներ<br>• Մասնակցություն դպրոցի խորհուրդներին՝ մանկավարժական, մեթոդական, ծնողական<br>•Մեթոդմիավորման փաստաթղթերի՝ պլանների, ժամանակացույցների, կանոնադրության կազմում, մշակում<br>• Ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների պլանավորում<br>• Գիտաժողովների, մանկավարժական զեկուցումների, վարպետության դասերի նախապատրաստում և անցկացում |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Տեղեկատվական – վերլուծական գործունեություն | • Ժամանակին տեղեկացնել մեթոդմիավորման անդամներին կրթական գործընթացի նոր փաստաթղթերին և փոփոխություններին, նոր ծրագրերին, տեխնոլոգիաներին, ուսումնամեթոդական ձեռնարկներին | • Մեթոդմիավորման անդամների տվյալների գրառում<br>• Ուսուցիչների մասնագիտական կարիքների և տեղեկատվական պահանջների բավարարում<br>• Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում՝ գործնական սեմինարների անցկացման նպատակով<br>• Մրցույթների, նախագծային և հետազոտական գործունեության արդյունքների վերլուծություն<br>• Մանկավարժներին ծանոթացնել մանկավարժական, հոգեբանական, մեթոդական և գիտաճանաչողական գրականության նորություններին<br>• Մեթոդմիավորման անդամներին իրազեկել ընդհանուր կրթական ծրագրերի բովանդակությանը, նոր դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին, կանոնակարգող իրավական փաստաթղթերին, նամակներին |
| 5. | Խորհրդատվական գործունեություն | • Ցուցաբերել բազմակողմանի օգնություն մեթոդմիավորման անդամներին, ծնողներին՝ տվյալ առարկայի շրջանակում կրթական գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ | • Մեթոդմիավորման անդամներին թեմատիկ և անհատական խորհրդատվություն՝ տվյալ առարկայի ուսուցման գործընթացին վերաբերող ուսումնական , մեթոդական, դաստիարակչական, սոցիալական, նորարարական և այլ հարցերի շուրջ |
| 6. | Հայտորոշիչ գործունեություն | • Անցկացնել հայտորոշում սովորողների գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների զարգացման վերաբերյալ,<br>• Համապատասխանություն ստեղծել դասավանդման գործընթացի և կանոնակարգող պահանջների միջև | • Տվյալ առարկայից յուրացվող գիտելիքների որակի հայտորոշման անցկացում |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Խմբագրական – հրատարակչական գործունեություն | • Տարածել մեթոդմիավորման անդամների աշխատանքի փորձը | • Հրատարակման համար նյութերի ընտրություն և նախապատրաստում մեթոդմիավորման անդամների փորձի տարածման նպատակով<br>• Արդեն հրապարակված նյութերի բազայի ստեղծում<br>• Դիդակտիկ նյութերի ընտրություն |
| 8. | Փորձարարական – նորարարական գործունեություն | • Մասնակցել նոր ծրագրերի փորձարարական աշխատանքներին<br>• Մշակել և վերակառուցել ուսուցման և դաստիարակության նոր ձևեր, միջոցներ և մեթոդներ | • Մեթոդմիավորման անդամների իրազեկում կրթական համակարգի նորարարական գործընթացներին<br>• Միջոցառումների անցկացում, որոնք ուղղված են մեթոդմիավորման անդամների փորձարարական և նորարարական գործունեության արդյունքների տարածմանը |
| 9. | Գիտամեթոդական գործունեություն | • Մասնակցել դպրոցում կազմակերպվող գիտահետազոտական գործունեությանը<br>• Կազմակերպել սովորողների նախագծային հետազոտական գործունեությունը | • Մասնակցություն դպրոցի զարգացման ծրագրին<br>• Մանկավարժական ամսագրերում գիտական հոդվածների հրատարակման նախապատրաստում<br>• Մասնակցություն կրթական բնագավառում հետազոտությունների անցկացմանը |

2023-2024 ուսումնական տարվա խնդիրները

2023-2024 ուստարում բնագիտական հանձնախումբը առաջնորդվելու է հանրակրթական հիմնական ծրագրով, որը ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջություն է, որն էլ ապահովում է հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված՝ շրջանավարտներին ներկայացվող նվազագույն որակական պահանջները: Ամփոփելով նախորդ ուստարվա արդյունքները՝ բնագիտական հանձնախմբի անդամները քաջ գիտակցում են իրենց առջև դրված խնդիրները:

Մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է գիտակցել իր պարտականությունները դասավանդած առարկայի ուսուցման որակը բարձր պահելու, մատաղ սերնդի հոգում հայրենասիրություն և ազգային արժանապատվության բարձր զգացում դաստիարակելու, ազգային ոգու և ավանդույթների պահպանման և դրանք հաջորդ սերունդներին փոխանցելու, պարտքի զգացում ձևավորելու գործում:

Բնագիտական առարկաների ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է լուծել բազմապիսի խնդիրներ, քանի որ այսօրվա դպրոցի ավանդական գործելակերպով չի կարելի աշակերտներին տալ գիտելիքների այն անհրաժեշտ նվազագույնը, որը նախատեսված է ուսումնական ծրագրով: Յուրաքանչյուր դասի հաջողությանը նպաստում է ոչ միայն ուսուցչի հմտությունների և կարողությունների օգտագործումը, այլ նաև ուսուցման արդի պահանջներին համապատասխան մեթոդների կիրառումը: Ուսուցիչը պետք է անի ամեն ինչ, որպեսզի յուրաքանչյուր դաս աշակերտի համար դառնա ըմբռնելի, մատչելի, ուսուցանող և հետաքրքիր: Կարևորագույն խնդիրն է նաև աշակերտին գրքին կապելը, ինքնուրույն մտածելու, դատողություններ և եզրահանգումներ անելու հմտությունների մշակումը: Ուսումնական գործընթացի կարևոր օղակներից են նաև արտադասարանական միջոցառումներն ու էքսկուրսիաները, այցելությունները համապատասխան թանգարաններ:

Մի գլխավոր խնդիրներից է դասավանդումը բարձրացնել որակական նոր աստիճանի, բարձրացնել դասավանդման պրակտիկ ուղղությունը և յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, կիրառելով ժամանակակից բոլոր մեթոդներն ու ձևերը: Անհրաժեշտ է անցկացնել և իրականացնել ուսուցիչների փորձի ուսումնասիրում, լաբորատոր աշխատանքների կազմակերպում, ինքնուրույն աշխատանքի զարգացում, համակարգիչների օգտագործում, ծանոթություն ժամանակակից հոգեբանամանկավարժական գրականությանը, մեթոդական նորույթներին: Հաճախակի անցկացնել փոխադարձ դասալսումներ՝ առաջավոր փորձի փոխանակման համար: Պետք է ներգրավել աշակերտներին ստեղծագործական աշխատանքներին, կազմակերպել լրացուցիչ աշխատանքներ թույլ աշակերտների հետ, անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրի նկատմամբ, առանձնահատուկ ուշադրություն դարձնել ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտներին:

Անհրաժեշտ է պատրաստել դիդակտիկ նյութեր, պարագաներ, պատի թերթեր, ստենդներ, անցկացնել ուսուցիչների հաշվետվություններ կատարած աշխատանքի վերաբերյալ:

| Հ/հ | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետ | Կատարման պատասխանատու | Նշում-ներ |
| --- | --- | --- | --- | --- |
| | 2023-2024 ուստարվա մ/մ տարեկան աշխատանքային պլանի հաստատում | սեպտեմբեր | մ/մ նախագահ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | 2023-2024 ուստարվա թեմատիկ պլանների վերանայում և հաստատում | սեպտեմբեր | մ /մ նախագահ | |
| 2. | Ծանոթացնել մեթոդմիավորման կանոնադրությանը, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը: Հանձնարարել մեթոդմիավորման տարեսկզբյան նիստերում<br>Ա.ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի<br>բաշխման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել տնօրենությանը ,<br>Բ.քննարկել և հաստատել յուրաքանչյուր առարկայից յուրաքանչյուր կիսամյակում նախատեսվող գործնական,թեմատիկ աշխատանքների քանակը : | Օգոստոս-սեպտեմբեր | Տնօրենություն,մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 3. | Իրականացնել նոր դասագրքերի քննարկումներ, անդրադառնալ բոլոր թեմաներին,մտահոգող հարցերին | սեպտեմբեր | Տնօրենություն,մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 4. | Կատարել առարկաների դրվածքների ուսումնասիրություններ և վերլուծություններ | ուստարվա ընթացքում | Տնօրենություն,մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 5. | Ուսումնասիրել առաջավոր փորձը և տարածել դպրոցում: | ուստարվա ընթացքում | Մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 6. | Կատարել նպատակային դասալսումներ, քննարկել ուսուցիչների հետ՝ գրանցելով անհրաժեշտ առաջարկությունները: Դասալսումների միջոցով անհրաժեշտ Օգնություն ցույց տալ | ուստարվա ընթացքում | մ մ նախագահ ուսուցիչներ | |
| 7. | Ուսուցիչների համար կազմակերպել մեթոդական զեկուցումներ: | ուստարվա ընթացքում | մմ նախագահ ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման, գնահատման համապատասխանությունը մեթոդական ցուցումներին: 7-12--րդ դասարաններում կիսամյակի ընթացքում առնվազն մեկ անգամ տարբեր առարկաներից կազմակերպել գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից, արդյունքները քննարկել: | ուստարվա ընթացքում | Տնօրենություն,մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 9. | Ամփոփել ուսման որակն ու առաջադիմությունը բոլոր առարկաներից յուրաքանչյուր կիսամյակ: | յուրաքանչյուր կիսամյակ: | մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 10. | Ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման, համակարգչային դասերի հաճախականության վիճակը | ուստարվա ընթացքում | մեթոդմիավորման նախագահ, | |
| 11. | Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին ծանոթանալու նպատակով անցկացնել գրավոր աշխատանքներ և արդյունքները քննարկել մմ նիստերում | ուստարվա ընթացքում | տնօրեն, մմ նախագահ, | |
| 12. | Կազմակերպել առարկաների ուսումնասիրություններ | պարբերաբար | Տնօրենություն, մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 13. | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել մմ նիստերում: | պարբերաբար | տնօրեն, մմ նախագահ, | |
| 14. | Օլիմպիադայի ներդպրոցական փուլի կազմակերպում, անցկացում: Տարածաշրջանային փուլի հայտի քննարկում | Դեկտեմբեր-հունվար | մմ նախագահ, ուսուցիչներ | |
| 15. | Ուշադրության կենտրոնում պահել գործնական, լաբորատոր և թեմատիկ գրավոր աշխատանքները: | ուստարվա ընթացքում | մ/մ նախագահ | |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | Կազմակերպել առարկայական շաբաթներ | ուստարվա ընթացքում | մմ նախագահ, ուսուցիչներ |
| 17. | Հատուկ ուշադրություն դարձնել դասարաններում առարկայական ծրագրերի կատարմանը և յուրացման որակին: | ուստարվա ընթացքում | մմ նախագահ |
| 18. | Քննաշրջաի ընթացքում կազմակերպել աշակերտների կոնսուլտացիոն պարապմունքներ տնօրենության կողմից հաստատված գրաֆիկով: | Ուստարվա վերջում | ուսուցիչներ |
| 19. | Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մմ անդամները մմ նախագահին հանձնեն գրավոր հաշվետվություններ 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների մասին: | Կիսամյակների վերջում | ուսուցիչներ |
| 20. | Ներկայացնել բնագիտական մեթոդմիավորման նախագահի հաշվետվությունը 2023 – 2024 ուստարում կատարած աշխատանքների մասին | Կիսամյակների վերջում | մմ նախագահ |
| 21. | Անցկացնել միջոցառումներ, կազմակերպել ինտելեկտուալ խաղեր, վիկտորինաներ: | ուստարվա ընթացքում | մմ նախագահ պարապող ուսուցիչներ |
| 22. | Կազմակերպել աշխատանքներ ներառական կրթության աշակերտների հետ, ժամանակին լրացնել ԱՈՒՊ-ները, լրացուցիչ աշխատանքներ տանել ետ մնացող աշակերտների հետ: | ուստարվա ընթացքում | Պարապող ուսուցիչներ |

ՄՄ ՆԻՍՏԵՐԻ ՊԼԱՆ

Առաջին կիսամյակ

| Նիստի ժամկետը | Քննարկման հարցերը |
|---|---|
| Սեպտեմբեր 2023թ. | 1. Մասնախմբի նախագահի և քարտուղարի ընտրություն, անդամների հաստատում: 2. Սեպտեմբեր ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: 3. Միավորային և ուսուցանող գնահատման մեթոդաբանության քննարկում |
| Հոկտեմբեր 2023թ. | 1. Սեպտեմբեր ամսվա կատարած աշխատանքների ամփոփում 2. Հոկտեմբեր ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: |
| Նոյեմբեր 2023թ. | 1. Հոկտեմբեր ամսվա կատարած աշխատանքների ամփոփում 2. Նոյեմբեր ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: |
| Դեկտեմբեր 2023թ. | 1. Նոյեմբեր ամսվա կատարած աշխատանքների ամփոփում: 2. Դեկտեմբեր ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: 3. Առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների արդյունքների ամփոփում , ուսումնական ծրագրի կատարողականի ամփոփում հաշվետվությունների միջոցով; |

Երկրորդ կիսամյակ

| Նիստի ժամկետը | Քննարկման հարցերը |
|---|---|
| Հունվար 2024թ. | 1. Դեկտեմբեր ամսվա կատարած աշխատանքների ամփոփում:<br>2. Հունվար ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:<br>3. Տնային աշխատանքների ծավալի և բովանդակության համապատասխանում, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: |
| Փետրվար 2024թ. | 1. Հունվար ամսվա կատարած աշխատանքների ամփոփում:<br>2. Փետրվար ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:<br>3. Ուսուցիչների կողմից առարկայական չափորոշիչների կատարողականի ստուգում: |
| Մարտ 2024թ. | 1. Փետրվար ամսվա կատարած աշխատանքների ամփոփում:<br>2. Մարտ ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:<br>3. Կենսաբանություն առարկայի դրվածքի ստուգում: |
| Ապրիլ 2024թ. | 1. Մարտ ամսվա կատարած աշխատանքների ամփոփում:<br>2. Ապրիլ ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:<br>3. Ֆիզիկա առարկայի դրվածքի ստուգում: |
| Մայիս 2024թ. | 1. Ապրիլ ամսվա կատարած աշխատանքների ամփոփում:<br>2. Մայիս ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:<br>3. 9-րդ դասարանում պետական ավարտական քննություններին նախապատրաստում:<br>4. Երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների արդյունքների ամփոփում: |
| Հունիս 2024թ. | 1. Մայիս ամսվա կատարած աշխատանքների ամփոփում:<br>2. Հունիս ամսվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:<br>3. Ծրագրի կատարողականի ստուգում և ամփոփում:<br>4. 2023-2024 ուստարում մասնախմբի ուսուցիչների կատարած աշխատանքների հաշվետվություն:<br>5. 2023-2024 բնագիտական մասնախմբի կատարած աշխատանքների հաշվետվություն:<br>2024-2025 ուստարվա նախնական դասաբաշխում |